ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2024 թվականի №---- -Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի նոյեմբերի 27-ի №Ե-1863-23, դեկտեմբերի 22-ի Ե-2075-23 և 2024 թվականի հունվարի 4-ի №Ե-10-24 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ «Ափ Դեվելոփմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կառուցապատող) Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր 39 փողոցի թիվ 2 շենքի հարակից տարածքում նախատեսում է իրականացնել բնակելի համալիրի կառուցապատման աշխատանքներ, ինչից ելնելով՝ առաջարկել է նշված տարածքի հարևանությամբ գտնվող, Ընկերությանը պատկանող Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր Լ. Խեչոյան փողոցի 29/3 ենթակայան հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 53 քմ. մակերեսով ՏԵ-1660 ենթակայանի (այսուհետ՝ Ենթակայան) շինությունը՝ առանց Ենթակայանի սարքավորումների, և դրանով զբաղեցված 0,0124 հա հողամասն (այսուհետ՝ Անշարժ գույք) առուվաճառքի գործարքով (այսուհետ՝ Գործարք) օտարել Կառուցապատողին, պայմանով, որ վերջինս, Գործարքի կնքումից հետո 36 ամսվա ընթացքում, փոխարենն Ընկերությանը սեփականության իրավունքով օտարի շահագործման ենթակա տարածք՝ նոր ենթակայանի շինությամբ՝ առանց սարքավորումների (այսուհետ՝ Գույք), ինչը հնարավորություն կտա ապահովել ինչպես Ենթակայանից սնվող ներկայիս բաժանորդների, այնպես էլ նոր կառուցվող շենքերի բնակիչների էլեկտրամատակարարումը: Ընկերության համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չառաջանալու համար կնքվելիք գործարքների գները պետք է սահմանվեն համարժեք՝ 28 000 000 դրամ, իսկ Գույքի շուկայական արժեքի՝ ավելի ցածր

լինելու դեպքում Կառուցապատողն Ընկերությանը պետք է վճարի Անշարժ գույքի և Գույքի շուկայական արժեքների միջև առկա տարբերությունը: Գույքի բոլոր հատկանիշները, նախքան դրա կառուցումը, գրավոր կարգով պետք է համաձայնեցվեն Ընկերության հետ և Գույքը պետք է կառուցվի Ընկերության կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան: Միաժամանակ, Ընկերությունը նշում է, որ վերջինս Գործարքի կնքումից մինչև Գույքի օտարումն ընկած ժամանակահատվածում կապահովի Ենթակայանից սնվող սպառողների էլեկտրամատակարարումը հարակից տարածքում գտնվող թիվ ՏԵ-1175 ենթակայանից, և, Ընկերությունը պարտավոր է մինչև Գույքի շահագործման հանձնումը՝ նախքան Ենթակայանի քանդումը, ապահովել դրանից սնվող սպառողների տեղափոխումն Ընկերությանը պատկանող թիվ ՏԵ-1175 ենթակայան: Ելնելով վերը նշվածից՝ Ընկերությունը խնդրում է տալ Գործարքին համաձայնություն,

բ) Հանձնաժողովի կողմից Գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը Գործարքի նկատմամբ կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Անշարժ գույքը Կառուցապատողին օտարելու գործարքի կնքմանը, պայմանով, որ՝

1) Ընկերությունը սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո 36 ամսվա ընթացքում Կառուցապատողից ձեռք կբերի Գույքը,

2) Ընկերությունը, Ենթակայանից սնվող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, պարտավոր է մինչև Գույքի շահագործման հանձնումը՝ նախքան Ենթակայանի քանդումը, ապահովել դրանից սնվող սպառողների տեղափոխումը Ընկերությանը պատկանող թիվ ՏԵ-1175 ենթակայան:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ՝

ա. Ենթակայանից էլեկտրաէներգիա ստացող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու պարտավորությունը և դրա պատասխանատվությունը կրում է Ընկերությունը,

բ. Անշարժ գույքի օտարումից հետո համապատասխան գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկից, իսկ Գույքի ձեռքբերմանն ուղղված ծախսերը (ոչ ավելի, քան 28 000 000 դրամ) կարող են ներառվել Ընկերության ներդրումային ծրագրում՝ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված կարգով Գույքի ձեռքբերման գործարքի վերաբերյալ համաձայնություն տալու մասին Հանձնաժողովի դիրքորոշումը ստանալու դեպքում:

գ. որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Ընկերությունն իրավասու է այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2024թ.